Հայաստանի Հանրապետության պետական
վերահսկողության ծառայության պետ՝
Պարոն Ռոմանոս Պետրոսյանին
ՀՀ Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի բնակիչ՝
Քաղ.Ջուլետա Թադևոսյանից
Հեռ. 093-19-40-31

Դիմում-բողոք

Հարգելի պարոն Պետրոսյան,

ՀՀ Կոտայքի մարզի Մրգաշեն համայնքի 1-ին փող. թիվ 13 նրբանցք թիվ 2 հասցեում գտնվող բնակելի կառուցապատման 0.2101 հա հողամասը սեփականության իրավունքով պատկանում է ինձ՝ համաձայն ՀՀ ԿԱ ԱԳԿ ՊԿ աշխատակազմի Կոտայքի մարզային ստորաբաժանման կողմից 04.11.2003թ. տրամադրված թիվ 2704017 սեփականության իրավունքի գրանցման վկայականի:

Շուրջ 31 տարի բնակվում եմ նշված հողամասի վրա տեղադրված վագոն-տնակում: Իմ հողամասի անմիջապես հարևանությամբ առանց իմ համաձայնության խախտելով ոլորտը կարգավորող բազմաթիվ իրավական նորմեր, անցկացվել է բարձր լարման հաղորդիչներ /երեք հատ եռաֆազ/, իսկ այժմ էլ նախատեսված է անցկացնել 10000-ից բարձր հաղորդալար:

Բազմիցս բանավոր դիմել եմ Եղվարդի էլեկտրոցանցին, սակայն որևէ դրական արձագանք չեմ ստացել:

Իմ ունեցած նախնական տվյալների համաձայն, բարձր լարման էլեկտրագիծը անցկացվել է Եղվարդի էլցանցի Նոր-Հաճնի մասնաճյուղի կողմից:

Նշված աշխատանքների իրականացման ընթացքում խախտվել է ,մասնավորապես, Էներգետիկայի մասին օրենքի 56 հոդ. 3-րդ կետի պահանջը, համաձայն որի էներգետիկայի բնագավառի օբյեկտների անվտանգության գոտիներում արգելվում է իրականացնել որևէ գործունեություն, որը կարող է սպառնալ օբյեկտների բնականոն աշխատանքին, քաղաքացիների և շահագործող անձնակազմի կյանքին ու առողջությանը, գույքի պահպանությանը՝ ըստ տեխնիկական կանոնակարգերի:

Նշված մոնտաժային աշխատանքներով խախտվել են նաև ՀՀ Կառավարության 02.04.2009թ. թիվ 363-Ն որոշման 30 հոդվածի 1-ին կետի ա/ ենթակետի՝ պահանջը,համաձայն որի 1000 Վոլտից բարձր լարման էլեկտրացանցերի համար սահմանվում են անվտանգության գոտիներ էլեկտրահաղորդման օդային գծերի երկայնքով, ընդգրկելով այնպիսի երևակայական ուղեձիք, հարդություններով սահմանված հողի մակերեսը և օդային տարածությունը, որոնք գտնվում են գծի երկու կողմից հետևյալ հեռավորության վրա՝ մինչև 20 ԿՎ 10 մետր հեռավորություն, մինչդեռ տվյալ դեպքում բարձր լարման գիծը անցնում է ինձ պատկանող անշարժ գույքից 0.5 մետրի վրա, ունեմ հաստատված նախագիծ սեփական բնակարան կառուցելու համար:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ 001
№ Մ/197-23
«26» 01 2023 թ.

Խախատվել է նաև նույն որոշման 46 կետի պահանջը,համաձայն որի նշված վերակառուցման աշխատանքները պետք է իրականացվեն տեղական ինքնակառավարման մարմինների հետ նախապես համաձայնեցնելուց հետո:
Նշված աշխատանքների իրականացման արդյունքում ոտնահարվել եմ իմ՝ որպես հարակից անշարժ գույքի սեփականատիրոջ՝ ՀՀ Միջազգային պայմանագրերով, Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված սեփականատիրական իրավունքները :
ՀՀ Քաղ.օրի 277 հոդ. համաձայն.Սեփականատերն իրավունք ունի պահանջել վերացնելու իր իրավունքների ամեն մի խախտում, թեկուզև այդ խախտումները զուգորդված չեն եղել տիրապետումից զրկելու հետ:
Ելնելով վերոգրյալից, կից ներկայացվող փաստատթղթերի հիման վրա և ղեկավարվելով վերը նշված իրավական նորմերով՝

Խնդրում եմ՝

Ձեռնարկել օրենքով նախատեսված համապատասխան միջոցներ սեփականության իրավունքով ինձ պատկանող ՀՀ Կոտայքի մարզի Մրգաշեն գյուղի 1-ին փող. 13 նրբանցքի թիվ 2 հասցեում գտնվող հողամասի հարող տարածքից ապամոնտաժել և տեղափոխել բարձր լարման հաղորդիչներն ու հենասյուները:
«Արդյոք՝ քաղաքաշինության կոմիտեի կողմից կտրմադրվի համապատասխան տեղեկանք, բնակարան կառուցել իմ սեփական հողամասում, հետագայում իրավունքի պետական գրանցման ժամանակ առարկություններ չլինելու համար, ունեմ նախագիծ, սեփական բնակարան կառուցելու թույլտվություն»:

Կից ներկայացնում եմ՝

1.Անշարժ գույքի սեփականության իրավունքի վկայականի լուսապատճենը
2.Տարածքի հատակագծային հանույթի լուսապատճենը անցկացվող հաղորդալարի գծանշմամբ
3. լուսանկար տեղանքից

Կանխավ շնորհակալ եմ՝

Դիմող՝ **Զուլետա Թադևոսյան**

23.01.2022թ.